Գիտահետազոտական կրթաթոշակներ Գերմանիայում ատենախոսության պաշտպանության համար՝ 3 տարի ժամկետով (ուշադրություն՝ փոփոխված ընթացակարգ)

Նպատակը

- Կրթաթոշակներն արտասահմանցի երիտասարդ գիտնականներին հնարավորություն են ընձեռում գիտահետազոտական կամ հետբուհական կրթության ծրագիր իրականացնել գերմանական բուհերում կամ արտահամալսարանական գիտահետազոտական հաստատություններում: Այս կրթաթոշակը կարող է ծառայել հետևյալ նպատակներին.
- Գիտահետազոտական աշխատանք գերմանական բուհերում՝ հայրենիքում գիտական թեզը պաշտպանելու նպատակով (այս կրթաթոշակներին են պատկանում նաև DAAD-Sandwich-Modell կրթաթոշակային ծրագիրը-www.daad.de/extrainfo)
- Գիտահետազոտական աշխատանք գերմանական բուհերում՝ Գերմանիայում գիտական թեզը պաշտպանելու նպատակով: Այսպիսի կրթաթոշակ հատկապես կարող է տրամադրվել տարբեր գիտահետազոտական դասընթացների, միջազգային այնպիսի ծրագրերի մասնակցության համար, որոնց ավարտին շնորհվում է գիտությունների դոկտորի գիտական աստիճան (օր.՝ բուհերի շրջանավարտների համար նախատեսված քոլեջներ, դոկտորանտուրաներ, Մաքս-Պլանկ գիտահետազոտական հաստատություններ) Ավելի մանրամասն ինֆորմացիա նշված հաստատությունների վերաբերյալ կարելի է գտնել www.daad.de/ipp ինտերնետային կայքում:

Տևողությունը

- Կրթաթոշակի տևողությունը որոշում է վերջնական ընտրություն կատարող հանձնաժողովը: Գերմանիայում պաշտպանության նպատակով տրվող կրթաթոշակների տևողությունը կարող է լինել մինչև 3 տարի:
- Գերմանիայում ատենախոսության պաշտպանության համար կրթաթոշակ տրվում է միայն այն դեպքում, երբ դրա համար առկա են առանձնահատուկ պատճառներ. եթե հայրենիքում չկան համապատասխան հնարավորություններ գիտահետազոտական աշխատանք իրականացնելու համար, և չկան համապատասխան գիտական ղեկավարներ:
- Գերմանիայում գիտական թեզը պաշտպանելու նպատակով շնորհվող կրթաթոշակների տևողությունը կազմում է 3 տարի, առանձին դեպքերում այն կարող է ձգվել մինչև 4 տարի: Սակայն կրթաթոշակները սկզբում տրվում են առավելագույնս մեկ տարի ժամկետով: Կրթաթոշակի տևողության երկարացում հնարավոր է միայն այն պարագայում, երբ կրթաթոշակի ընդհանուր տևողությունը գնահատվել է արդյունավետ:
- Կրթաթոշակները կարող են ուժի մեջ մտնել հունիսի 1-ից:

Կրթաթոշակային վճարումներ

- DAAD-ն վճարում է կախված կրթաթոշակակրի կրթական մակարդակից ամսական կրթաթոշակ, որը կազմում է 750 եվրո բակալավրի աստիճան ունեցողների համար, իսկ 1000 եվրո ասպիրանտների կամ հայցորդների համար: Կրթաթոշակն իր մեջ ներառում է նաև որոշ վճարումներ բժշկական ապահովագրության հետ կապված: Բացի դրանից DAAD-ն վճարում է նաև ճանապարհածախսի հետ կապված վճարումները:
- Վեց ամսից ավել տևողությամբ կրթաթոշակների դեպքում տրամադրվում է կրթության կամ գիտահետազոտական աշխատանքի համար անհրաժեշտ օգնություն, ինչպես նաև հավելավճար բնակվարձի և ընտանիքի անդամների համար: Առանձին դեպքերում հնարավոր է նաև ֆինանսավորում լեզվի կուրսերի համար:
- DAAD-Sandwich ծրագրի դեպքում կարող են նաև տրամադրվել ճանապարհածախսեր ղեկավարներին, եթե դրանք նախապես նշված են դիմումի մեջ:

Դիմելու համար անհրաժեշտ պայմանները՝

- DAAD-ի գիտահետազոտական կրթաթոշակների համար կարող են դիմել բարձր որակավորում ունեցող բարձրագույն կրթություն ունեցող բոլոր այն անձինք, ովքեր գոնե կրթաթոշակը սկսվելու պահին կունենան մագիստրոսի աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում: Եզակի դեպքերում կրթաթոշակ կարող են ստանալ նաև բակալավրի աստիճան ունեցող անձինք կամ նրանք, ովքեր արդեն իսկ ունեն գիտությունների թեկնածուի աստիճան: Բժիշկները պետք է ունենան առնավազը 6 տարվա բժշկական կրթություն և պետք է գրանցված լինեն օրդինատուրայում:
- Այն դիմորդները, ովքեր ձգտում են պաշտպանության հայրենիքում, պետք է ունենան համապատասխան թույլտվություն իրենց բուհից (ասպիրանտի կան գիտական հայցորդի կարգավիճակ)
- Գերմանացի դասախոսի գրավոր հրավերի առկայություն, որը հստակորեն առնչվում է դիմորդի գիտահետազոտական նպատակին և ցույց է տալիս համագործակցելու և աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պատրաստակամությունը: Եթե պաշտպանությունը պլանավորվում է գերմանական բուհում, ապա որպես կանոն պետք է առկա լինի համապատասխան ղեկավարի համաձայնությունը:
- Գերմանիայում պաշտպանություն պլանավորող դիմորդները պետք է ներկայացնեն Գերմանիայում պաշտպանության հնարավորությունը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև համապատասխան համաձայնագիր՝ տրված գերմանացի ղեկավարի կողմից :
- Ընտրության համար կարևոր չափանիշ է դիմորդի կողմից մինչ այժմ ցուցաբերած ուսման առաջադիմությունը, ինչպես նաև Գերմանիայում իրականացվելիք գիտահետազոտական աշխատանքի հիմնավոր և համոզիչ շարադրանքը, որը պետք է համաձայնեցված լինի գերմանացի ղեկավարի հետ:

- Որպես կանոն, պարտադիր պայման է գերմաներենի իմացությունը, ինչը սակայն պայմանավորված է դիմորդի ընտրած առարկայից և նպատակներից: Առանձին դեպքերում, երբ ընտրված մասնագիտությունը կամ առարկան պատկանում է բնական և ինժիներական գիտություններին և, երբ հրավիրող բուհը նշված մասնագիտական կուրսը անց է կացնում անգլերեն լեզվով, անհրաժեշտ է ներկայացնել անգլերեն լեզվի իմացության վկայական՝ համապատասխան բուհի պայմաններին: DAAD-ն մասնավոր դեպքերում որոշում է, թե արդյոք նպատակահարմար է տրամադրել իր կողմից ֆինանսավորվող գերմաներենի կուրս՝ կրթաթոշակը սկսվելուց առաջ: Նման լեզվի կուրս կարող է տրամադրվել միայն վեց ամսից ավել տևողությամբ կրթաթոշակի դեպքում:
- Դիմելու պահին դիմորդը պետք է բուհը ավարտած չլինի ավելի քան 6 տարի առաջ, ասպիրանտների պարագայում այն պետք է լինի ոչ ավելին քան 3 տարի, իսկ գիտական թեզը պաշտպանածները՝ 4 տարի:
- Այն դիմորդներն, ովքեր դիմելու պահին մեկ տարուց ավել գտնվել են Գերմանիայում չեն կարող դիմել ծրագրին:
- Բժշկական բնագավառի առանձնահատկություններին վերաբերող ցուցումները կարող եք գտնել կցված հուշաթերթիկից, որտեղ տեղեկացվում է բժշկության բնագավառում ուսման պայմանների և դիմելու համար անհրաժեշտ պայմանների մասին (համապատասխան տեղեկություններ կարելի է գտնել նաև հետևյալ ինտերնետային կայքից www.daad.de/extrainfo):
- Նախապատվությունը տրվում է այն դիմորդներին, ովքեր ձգտում են գիտական նվաճումների:

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

Դիմումի ձև ներկայցվում է on-line – տարբերակով, **MOVE**-համակարգով (www.funding-guide.de)

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել նաև թղթային տարբերակով՝ երեք օրինակից :

- Դիմումի ձև՝ www.funding-guide.de, MOVE-համակարգով, գրանցվելուց և դիմումաձևը լրացնելուց հետո պետք է վերբեռնել բոլոր անհրաեշտ փաստաթղթերը, որոնք ներկայացված են ստորև: Մանրամասները նայել՝ http://www.daad.am/de/14295/index.html#Forschung
- Կենսագրություն (CV)
- Հետազոտության նպատակի մանրամասն և ճշգրիտ շարադրանք/ Թե ինչ կառուցվածք պետք է ունենա Ձեր հետազոտական աշխատանքը, կարող եք նայել հետևյալ հուշաթերթրիկում, որը կգտնեք մեր անգլերեն կամ գերմաներեն լեզվով կայքում, համապատասխան ծրագրի ներքո
- Գերմանացի դասախոսի կողմից հրավեր, համաձայնագիր
- Մասնագետ-դասախոսների կողմից տրված 2 երաշխավորագիր՝ DAAD-ի համապատասխան հայցաձևի վրա/ երաշխավորագրերը ներկայացնել փակ ծրարով, վերբեռնել անհարժեշտ չէ

- Վկայականներ (առանց նոտարական վավերացման, եթե առկա է թարգմանված տարբերակը բուհի կողմից, եթե ոչ թարգմանությունները կարող են հաստատվել կամ բուհի, կամ թարգմանչական գրասենյակների կողմից, ընդունվում են միայն գերմաներնե կամ անգլերեն լեզվով թարգմանությունները)
  - հասունության վկայական /ատեստատ
  - բուհի ավարտական վկայական՝ դիպլոմ (բակալավրի, մագիստրոսի)
  - առկայության դեպքում նաև գիտությունների թեկնածուի վկայականը

- Ասպիրանտների (հայցորդների) և օրդինատորների դեպքում պահանջվում է նաև տեղեկանք՝ ասպիրանտուրա/օրդինատուրա ընդունվելու մասին
- Գերմաներենի իմացության վկայական (On DaF, Test DaF, DSD, DSH, ինչպես նաև Գյոթե ինստիտուտի կողմից ճանաչված համապատասխան վկայականները)
- Առկայության դեպքում գիտական հրապարակումների ցանկ
- Առկայության դեպքում տեղեկանք անցկացրած պրակտիկաների մասին

Համապատասխան վկայականները պետք է վերբեռնել միայն նշված վերնագրի տակ:
Բոլոր փաստաթղթերը պետք է հանձնել առանց ամրակների, միակողմանի տպված: Լրացուցիչ փաստաթղթեր չեն ընդունվում և խնդրում ենք նաև չվերբեռնել:

DAAD-ի Բոննի գրասենյակին ուղիղ հասցեագրված դիմումները չեն կարող դիտարկվել:

Գերմանիայում ուսման և հետազոտման հնարավորությունների մասին համապատասխան տեղեկատվություն կարելի է գտնել նաև հետևյալ ինտերնետային կայք էջերում՝ www.phdgermany.de, www.research-in-germany.de

Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի նոյեմբերի 10-ը:
Գերմաներեն լեզվի քննությունը տեղի կունենա նոյեմբեր ամսին փաստաթղթերի հանձնումից հետո:

https://www.daad.de/sapportal/hilfe/hb_download/PBF_de.html